

որից յետոյ հետզհետէ ընդլայնելով աստիճան առ առտիճան պէտքէ տանէր ղէպի մանկական երգերը։ Թէ ի՞նչպիսի մանկական երգեր պէտքէ ընտրել, ոյլոյ յօգուածիս վերևը պարզեցի ըստ իմ կարողութեան։ Արդորդ՝ եղանակների կազմութեան մասին ոչինչ տեղեկութիւն չկայ գառագրքի մէջ։ ուստի յիշեալ քահանային համեստաբար խորհուրդ կտամ, որ միւս անգամ աշքի առաջ ունենայ, Աչքի առաջ ունենայ նաև քառաձայն երգեր, որոնցից զուրկ են մեր գորոշները, թէպէտե Եղնիկ, քահանայն վերջերս վիճագրութեամբ հրատարակեց մի քանի ազգային երգեր և մի քանի շարականներ չորս ձայնով։ բայց և այնպէս, զոքա շատ սակաւթիւն լինելով, և բաւական թանգ զնով վաճառուելով, բաւականութիւն չեն կարող տալ մեր ծիսական ուսումնաբանների աղքատ ուսանողներին։

Վերջացնելով իմ համեստ նկատողութիւններս, աւելացնում եմ և այն, որ պ. Դիկ, Ա. Թաշճեանի աշակերտներից միայն Եղնիկ քահանայն է աշխատում, իսկ միւսների հետքն անգամ չեն երեսւմ։

ԴԱՌԱՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՒԾԵՓԵԱՆ.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԽ ԱՐԱՐ. ԶՈՂՈՀԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾ ԱԿԱԴԵՄԻԵԱ.

Այս յօդուածի մէջ ես վստահանումեմ ընթերցողների ուշադրութիւնը դարձնել երկու նշանաւոր, ոչ միայն պարզ—տեսական, այլ եւ պարզ—գործնական յարաբերութեան մէջ եղող գիւտերի վրայ, որոնք փոքր ինչ լոյս են տարածում կնճռած ինդքի ծնկու (գեզէսի), զարգանալու եւ վարակիչ տարափոխիկ ախտերի առողջացուցիչ միջոցների վրայ։ Վաղուց արդէն կարծիք կայ, որը Պաստեր բժշկից, ի շարս այլոց, պահպանվումէ եւ պաշտպանվում, թէ այդ ախտերի գլխաւոր պատճառ եւ ազքիւր լինումեն խոշորացուցական (մանրացուցով երեւացող) ջրածին զեւունները (սնկիկ, սունկ), որոնք զարգանումեն կենդանու մէջ եւ կործանիչ կերպով ներգործումեն նորա գործարանի վրայ, եւ թէ այդ ախտաբորբոք զեւունների ազգեցութեան հետ պատերազմելու ամենաստոյգ միջոցն է՝ գեռ չվարակուած գործարանի վրայ թունաւոր թարախով (բազկացած զեւուններից) կամ վարակուած զեւուններով կենդանու արիւնով պատուաստելը, (պրիվիեկա) այն կենդանու, որը մեռել է կամ տանջուել տարափոխիկ ախտից Ամանք մարդակազմութեան

հմաւտներից՝ (Փիզիոլոգիա) բժշկներից, նրանց թվում եւ Պատահեր, կարծումնեն, թէ վարակիչ ախտը՝ այդ եղանակով պատուատած առողջ գործարանի վրայ կորցնումէ իւր մտչարեր զօրութիւնը եւ յայտնվումէ նրա մէջ մի շատ իւսով եւ անլինասերեւութով։

Տուլուգայի անատոմարուժական դպրոցի ուսուցչապետ Թունենի նորագոյն փորձերը կատարելապէս հաստատուեցան թուլէլ բժշկի փորձերով Ալֆօրտում։ Ժանտախտային պատուատի եւ թէ նոյն իսկ -Պատահերի «Հաւի խոլեռայ» անունով, փորձերը բոլորովին արդարացնումեն այդ ենթագրութիւնը եւ աղացուցանումեն՝ թէ բոլոր վարակիչ տարափոխիկ ախտերի վարակիչ թարախիք գտնուումէ այնպիսի յարաքերութեան մէջ գէպի այդ ախտերը, ինչպէս որ նախապահպանողական (կոլային, երախայական) ծաղկինը գտնվումէ գէպի ծաղկիկ — կոչուած տարափոխիկ ախտը։

Էռլորին յայտնի է, եւ ես կարծումեմ, ընթերցող, ձեր Հայրենակիցների համար առանձնապէս, թէ ինչ զարհուրելի բարկութեան գաւաղան է երեւում եղջերաւոր անասնոց ժանտախտը ժողովրդական տնտեսութեան մէջ։ Հարիւր հաղար անասուններ ամեն տարի միայն Եւրոպայում զոհ են գնում այդ անխնայ ախտին, որի հետ ի զուր պատերազմել է եւ մինչեւ ցայդմ էլ պատերազմումէ այժմեան անասնարուժութիւնը (Վետերինարիա)։ Իսկ բոլոր միջոցները, որ փոքր ինչ յաջողութիւնով գործադրվումեն նորա գէմ; ունին, այսպէս ասել, միայն առողջապահական բնաւորութիւն։ Այդ միջոցները արգելումեն միայն ժանտախտի տարածութիւնը, հեռացնելով հիւանդ անասունը առ ողջից, պատուիրելով այրել կամ հողի մէջ խոր թաղել վարակուած դիակները եւ այլն, բայց նորանք չունին ի նկատի ոչընչացնելու կամ թուլացնելու նորա կորստական ազգեցութիւնը կենդանիների գործարանի վրայ։ Այդ պատճառաւ գործնականապէս նորանք շատ անգամ երեւացել են եւ երեւումեն քիչ բռտոյդ։ Գործնականապէս զժուար է միմիայն կառավարչական — առողջապահական միջոցներով առաջուց իմաց տալ անասունի վարակուիլ այն աեղերում ուր երեւացել է արդ էն ժանտախտը։ Նորա վարակիչ թայնը տարածվումէ եւ սոսիկանական տեսչութիւնից անմատչելի ճանապարհով։ Ժանտախտի ժամանակ պա-

տապարել առողջ անասունները հիւանդներից վարակուելոց՝ նոյնպէս դժուար է եւ համարեաթէնոյնպէս անկարելի, ինչպէս որ միւս ամէն վարցաւի *) (տիֆական), խօսեռական եւ այլ տարափոխիկ ախտերի ժամանակ: Ահա ինչ պատճառաւ ժամանախի հետ պատերազմելու, ամենից բուտոյք եւ արմատական միջոց ները (родикալինայ) ինչպէս եւ միւս ամեն առափոխիկ ախտերի, լինումեն ոչ այն միջոցները, որոնք ուղղած են բացառ առէս վարակումը յառաջուց իմաց տալուն, այլ այն միջոցները, որ ուղղած են ժամանախի ազգեցութիւնը չեզքացնելու առողջ գործարանի վրայ: Սակայն, ինչպէս վերեւումը նկատած է, մինչեւ ցայտը անասնաբուժութիւնից գործադրուած վերջին տեսակի՝ բոլոր միջոցները երեւեցան անսառոյք: Թուսենին վիճակուեցաւ գանել նոր միջոց, որ արգէն ունեցաւ այնպիսի փառաւոր հետեւանք, ինչպէս ծաղկի հիւանդութիւնի հետ պատերազմելու միջոցը: Նա փորձ փորձեց պատուաստել ժամանախար նոյնպէս, ինչպէս պատուաստումեն ծաղիկը, եւ փորձառութիւնը կատարեալ յաջող երեւեցաւ, ոչխարների եւ շնչրի վրայ ժամանախ պատուաստելու բոլոր նորաբազմաթիւ փորձերը պատահեցան լիուլի յաջողութիւնով: Ժամանախով պատուաստած անասունը նոյն իսկ վարակուելու նպաստող հանգամանքներում չէր վարակուում նրանով: Իսկ քիչ զէպիերում եթէ անգամ վարակումէր, այն էլ այնպէս թոյլ եւ չնչին աստիճանով, որ հիւանդութիւնը երբէք չէր ունենում մահաբեր հետեւանք:

Ի՞նչ բանումն է կայանում թուսենի նորագիւտ ժամանախային պատուաստելու եղանակը: Հասարակ եւ պարզ օպերացիայի **) (օպերացիա) մէջ: Թուսենը բաց է թողնում ժամանախից սատակած անասունից՝ վարակուած կամ զեռուններով լցուած:

(*) Կարծումքում վարցաւ ու, որ աշխարհաբար փոխազրական ախտերի համար գործ է անվում, շինուած է վարակութիւն, ցաւով բառերից, ուստի ութիւնը չի լինելով հայերէն լեզուի մէջ, այսուհետեւ վատ չի լինի տիֆական բառերի տեղ գործ ածել, վարցաւ վարցաւական:

(**) Բժշկականութիւնի մէջ օպերացիա – օպերացիա նշանակումէ բժշկական որևէ գործողութիւն, կենդանու մարմնոյ վնասված մի մասը կը բարելով, որ զրանով ոչնչացնէ տկարութիւն:

արիւնի փոքր ինչ քանտկութիւն, յետոյ 10 րոպէի չոփ
նա ենթարկումէ նրան 55 տսախճանի ջերմութեան ազգեցու-
թեան որը զեռուններին սպանելու կատարելադէս բաւական
է: Ահա այս իսկ զեռուններից մտքրած արիւնը դառնումէ
նիւթ (մայա) ժամտախտի պատուաստելուն: Այս նիւթով
պատուաստը (քանի մի անգամ) անասունի վրայ՝ անմատցե-
լի է կացուցանում նորան ժամտախտի ազգեցութիւնից: Թու-
ուէն ներս ածեց զեռուններով լցուած արիւնը՝ վարակուած
ժամտախտային թոյնով ոչխարների եւ շների արիւնի անօթ-
ների մէջ, որոնք ենթարկուած էին ժամտախտային պատու-
աստի եւ չնայելով դորան, նորա ոչխարները եւ շները չցոյց
տուին անգամ այն սարսափելի հիւանդութեան մի փոքրիկ
նշանը:

Այն ժամանակ, երբ Տուլուզի ուսուցչապետը անումէր խո
ժամտախտային պատուաստի վորձերը, Պատոերիւրկողմից ձեռք
սուաւ հաւերի թարախալից ժամտախտի վերին աստիճանի հե-
տաքրքրական վորձերը, որոնք սատակումէին «Հաւի խօյեռայից»,
որը հետազօտիցաւ եւ բացատրվեցաւ թշկական արհետով*):
Էստ կարծեաց Պատոերի այդ հիւանդութիւնը վերին աստիճանի
տարափոխիկ է: Վարակիչ թարախիլը բաղկանումէ մանրացուցա-
կան զեռուններից (սնկիկ): Հաւի մկաններից պատրաստած ար-
գանակի մէջ այդ զեռունները անսովոր եղանակաւ արագ զար-
գանումէն եւ բազմանում: Փոքր ժամանակ անցնելուց յետոյ,
այդ արգանակը այն աստիճան վարակիչ է դառնում: Որ նրա քանի
մի կաթիլը՝ ներս ածելով հաւի գործարանի մէջ շուտ սպա-
նումէ նորան: Արգանակի թունաւոր յատկութիւնը, այսինքն
ժամտախտային թարախի զարգացումը եւ բազմանալը, առա-
ջին ամիսներում սաստկանումէն, բայց եթէ նա լինի ծածկած
ամանի մէջ, այդ գէպքում նա թուլանումէ եւ սակաւ առ
սակաւ բոլորովին անգամ չքանաւմ:

Այդ եղբակացութեանը եկաւ Պատոեր հետեւեալ վորձերի
հիմունքների վրայ, նա վեր առաւ քանի մի ապակեայ աման-

(*) Այդ հետազատութիւնների հետեւանքը նա հաղորդեց գիտութեանց
Ճեմարանի նիստումը / 26 Հոկտեմբերի:

ներ, ծորակ (տրյճեա) եւ լցրեց նրանց վարակիչ արգանակով մէկը՝ մինչեւ կէսը, միւսները՝ մինչեւ երկու երրորդ մասը, երրորդը՝ մի չորրորդ մասը ծորակի, եւ յետոյ ամսուր վակեց նորանց: Երկու չորս վեց եւ այլն ամիսներ անցնելուց յետոյ, նահետեւաբար բաց էր անում նորանց եւ քանի մի կաթիլ նորանց միջի պարունակուած արգանակից ներս էր ածում հաւի գործարանի մէջ, հաւը ամբողջապէս առանց ուշանալու վարակվումէր եւ սատակում: Բոլոր ծորակների միջի արգանակը միատեսակ աստիճանի վարակիչ երեւեցաւ: Մի եւ նոյն ժամանակ փակած ծորակների միջի արգանակի փորձերի հետ, Պաստեր արաւ շատ համանման փորձեր բաց թողած ծորակների արգանակի վրա: Արգանակը, որ երկու ամիս միայն ածած էր, այդ ժամանակամիջոցում արտայայտեց համարեա թէ նոյնպիսի վարակիչ յատկութիւն, ինչպէս եւ ծորակների մէջ փակուած արգանակը: Բայց փորձած արգանակը չորս ամսից յետոյ երեւեցաւ աւելի սակաւ աստիճանի թունաւոր, իսկ վեց ամսից յետոյ ախտը այն աստիճան թուլացել էր, որ ներս ածելով հաւի գործարանը, նա նախապահպանողական ծաղկի պէս նախապահպանումէր նորանխօնեռային թարախի մահացուներգործութիւնից: Հաւը մշտապէս ապահովվումէր այդ հիւանդութեան գոնէ ամենավտանգաւոր եւ սուր ձեւերից: Այսպէս Պաստերի փորձերը ապացուցին տարափոխիկ խօնեռայի հաւերի վրա պատուաստելու հնարաւորութիւնը:

Այդ պատուաստելու համար նիւթ (մայա մատերիք) լինումէ խօնաւային թարախը, կորցնելով իւր ժանտախտային յատկութիւնները օդային թթուածնի ազդեցութեան տակ: Պաստեր այդ թարախը անուանումէ թուլացրած vīpus attēnué եւ հաստատումէ, թէ՝ ըստ յարաբերութեան հաւի խօնեռայի, նա ունի նոյնպիսի կատարեալ նշանակութիւն, ինչպէս կովայինը կամ իերեխայական ծաղկը ունի ըստ յարաբերութեան ծաղկի տարափոխիկ լինելուն:

Պաստերի գիւտի վսեմ հետեւանքը թէ գիտնական եւ թէ պարզ — գործնական տեսակէտից նայած՝ կայանումէ՝ առանց հակառակելու՝ այն ազդեցութիւնը բացատրելու մէջ, որը ցոյց է տալիս թթուածին օդը հաւի խօնեռայի վարակիչ թարախի վրա: Արգարեւ, եթէ նրա ազդեցութեան տակ այդ թա-

րախը վարակիչ յատկութիւնից գոյափոխվումէ սուկաւ առ սուկաւ ի հակ—վարակիչ յատկութիւն, ուրեմն հիմն չկայ ենթադրելու, թէ նոյնը չի կարող պատահիլ եւ բոլոր միւս թարախների ամեն էպիգեմիքական վարակիչ ցաւերի հետ, այսինքն որպէս զի բոլոր այդ թարախները չկարողանային վարակիչ յատկութիւններից փոխվել ի հակավարակիչ յատկութիւն։ Խոկ եթէ նորանք կարող են, եթէ հաւի խօլեռայի թարախը բացառութիւն չէ հասարակ կանոնից, ուրեմն այդ եպիգեմեայի բժշկելու կերպը եւս (այսինքն նորա պատուաստիլը) չէ բացառական կերպ, ընդ հակառակը նա պէտքէ լինի ընդհանուր եւ ամեն միւս էպիգեմիքաների համար։

Թումէն եւ Պաստեր շարունակումնն իւրեանց հետաքրքրական փորձերը եւ հետազօտութիւնները։ Կհաստատուի՞ն արդեօք նոր փաստերով նրանց արդէն ձեռք բերած հետեւանքները թէ ոչ՝ ցոյց կտայ ապագան։ Այնու ամենայնիւ չի կարելի չխօստովանուիլ նոցա գիւտերի ահագին գիտնական եւ գործնական վսեմութիւնը։

(Թարգմ.)

Զ. Տէ՛ր Զադարչեանց։

ԱՆԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ ԶՂՋՈՒՄՆ ԵԽ ԴԱՐՁԸ.

Ինչպէս յայտնի է, թէ հեթանոսութեան զարերում և թէ քրիստոնէութեան ժամանակ պատահել են երբեմն մարզիկ, որք ընկել են անաստուածութեան մէջ։ Դոքա եղել են ըստ մէծի մասին գիտնական փիլիսոփաներ, որք խուլ մնալով իւրեանց հոգեկան զգացմունքներին — աստուածականաչութեան զիմաւոր ազբիւրին, կամեցել են պաղ մոքի վերացական քննութիւններով և հետազօտութիւններով որոշել թէ ի՞նչ է Աստուած, և չկարողանալով հասնել այդ բանին՝ եկել են այն սխալ եղրակացութեան թէ չկայ ուրեմն Անտուած։ Անաստուածութեան մոլորութիւնը առանձին զարգացումն ստացաւ ի միջի այլոց և անցեալ զարուիլիսուփայութեան մէջ, մանաւանդ ֆրանսիացի Վոլտերի և իւր համամիտ հետեւողների ջանքով։

Քայլ նոյնպէս յայտնի է որ՝ այդպիսի փիլիսոփայ անաստուածներից մէծագոյն մասը ամեն ժամանակ ծանր տարաբախութիւնների մէջ և մանաւանդ մահու առաջն միջտ զջջացել են և գարձել ճշմորիտ աստուածապաշտութեան։ Այն մարզիկ, որք իւրեանց բոլոր կեանքի ընթացքում բանիւ և զրով քարոզել են եռանդով և համարձակութեամբ թէ չկայ